11059

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«29» 09 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 227 - 25

Նախաձեռնող՝ *«Մլ Մայնինգ» ՍՊԸ*
ք. Երևան, Արաբկիր Ն. Ադոնցի փ., 21/3,

Գործունեությունը՝ *Արփաշատի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի 1-ին փեղամասի արդյունահանում*
Արարատի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 227-25

«29» 09 2025թ.

Արտաշատի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Արտաշատ բնակավայր

Ներածական մաս. Արտաշատի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասը գտնվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ բնակավայրի վարչական տարածքում: Արտաշատ բնակավայրի մոտակա շինություններից 3,0-3,6 կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքի հողերն ըստ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության հանդիսանում են Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ բնակավայրի ջրային և գյուղատնտեսական նշանակության հողամասեր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (Այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է իրականացնել ավազակոպճային խառնուրդի արդյունահանում: Նախատեսվում է տեղամասը մշակել բաց լեռնային աշխատանքներով: Պաշարների վերականգնման գործակիցն ընդունված է 1 միավոր:

Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի մշակման համակարգ:

Հանքավայրից (1-C_1, 2-C_1, 3-C_1, 4-C_1, 5- C_1 բլոկներ) օգտակար հանածոյի մարվող պաշարները 20 տարվա ընթացքում կազմում են 3000.0 հազ.մ^3, այդ թվում ստատիկ մարվող պաշարները՝ 1- C_1, 2- C_1, 3- C_1, 4- C_1, 5- C_1 բլոկներից համատեղ 2 114 744 մ^3, իսկ դինամիկ պաշարները 1- C1, 2- C1, 3- C1, 4- C1, 5- C1 բլոկներից համատեղ 885 256 մ^3:

Հանքավայրից տարեկան մարվող պաշարները կազմում են 150 000 մ^3, ընդ որում 3-C_1 բլոկից 80 000մ^3 պաշարներ, իսկ 4- C_1, 5- C_1, 1- C_1, 2- C_1 բլոկներից յուրաքանչյուր տարի ըստ նշված հերթականության մարվելու է տարեկան 70 000 մ^3 պաշարներ:

Օգտակար հանածոյի կորզվող պաշարները – 2 880 340 մ^3:

Ավազակոպճային կուտակում կոպճի պարունակությունը կազմում է 44.21%, ավազինը՝ մոտ 55.79 %:

Բացահանքերն ըստ բլոկների վերջնական դիրքում ունեն հետևյալ պարամետրերը:

1-C_1 բլոկ
ամենամեծ երկարությունը – 507 մ,
ամենամեծ լայնությունը – 157 մ,
ամենամեծ խորությունը – 4.4 մ,
օտարման տարածքը – 58441մ^2,

2-C_1 բլոկ
ամենամեծ երկարությունը – 1030 մ,
ամենամեծ լայնությունը – 115 մ,
ամենամեծ խորությունը – 4.4 մ,
օտարման տարածքը – 76547 մ^2

3-C_1 բլոկ
ամենամեծ երկարությունը – 1025 մ,
ամենամեծ լայնությունը – 420 մ,
ամենամեծ խորությունը – 5.5 մ,
օտարման տարածքը – 364317 մ^2,

4-C_1 բլոկ
ամենամեծ երկարությունը – 439 մ,
ամենամեծ լայնությունը – 318 մ,
ամենամեծ խորությունը – 5.1 մ,
օտարման տարածքը – 101256 մ^2:

5-C_1 բլոկ
ամենամեծ երկարությունը –540 մ,
ամենամեծ լայնությունը – 360 մ,
ամենամեծ խորությունը – 4.0 մ,
օտարման տարածքը – 125227 մ^2:

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:

Աշխատանքային օրերի քանակն ընդունվում է տարվա մեջ 195 օր, աշխատանքային հերթափոխի քանակը՝ օրվա մեջ 1 հերթափոխ, 8 ժամ տևողությամբ:

Քանի որ օգտակար հաստաշերտն ունի հորիզոնականին մոտ տեղադրում, հանքաշերտի բացումը կատարվելու է բացահանքային դաշտի հարավ-արևելյան մասից 1- C_1, 2- C_1, 3- C_1, 4- C_1, 5- C_1 բլոկների (ամենացածր նիշից) ընդլայնական կտրող խրամի անցումով:

Կտրող խրամի երկարությունը 1- C_1, 2- C_1, 3- C_1, 4- C_1, 5- C_1 բլոկներում կկազմի համապատասխանաբար՝ 260 մ, 86 մ, 180 մ, 220 մ, 110 մ, լայնությունը հիմքի մասում միջինը 8.0 մ, միջին խորությունը համապատասխանաբար՝ 2.54 մ, 2.66 մ, 3.03 մ, 2.96 մ, 2.08 մ:

Մակաբացման ապարները բուլդոզերով կուտակվելու և ավտոինքնաթափով տեղափոխվելու են միջինը 1 կմ հեռավորության վրա գտնվող լցակույտեր:

Արդյունահանված ավազակոպճային խառնուրդի տեղափոխումը մինչև 6կմ միջին հեռավորության վրա գտնվող արտադրամաս կատարվելու է ավտոինքնաթափի միջոցով:

Մակաբացման ապարները՝ ընդհանուր 858757մ³ ծավալով տեղափոխվելու են N_1, N_2, N_3 լցակույտեր:

Լեռնատեխնիկական վերականգնումներն իրականացվելու են բացահանքի շահագործման ավարտից հետո: Հարթեցումը կկատարվի բացահանքի միայն արդյունաբերական հրապարակի 200մ² և լցակույտերի 21450 մ², 22800 մ², 21400 մ², 15 200մ² մակերեսներում:
Միասին կկազմի՝ 80850 մ²:

Իրականացվելու է 3-C_1, 4-C_1 բլոկներում համապատասխանաբար 963 մ, 296 մ երկարությամբ 8մ լայնությամբ մոտեցող բնահողային ավտոճանապարհի կարգաբերում, արդյունաբերական հրապարակի կարգաբերում 30 մ³ ծավալում, դրենաժային (ցամաքեցման առվի կառուցում) բացահանքի հարավ արևելյան մասից 3- C_1, 4- C_1 բլոկներում: Կատարվող հողային աշխատանքները միասին կկազմեն 1550 մ³:

Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջորը մատարակարվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Տեխնիկական ջուրը բերվելու է ջրցան ավտոմեքենայով:

Բացահանքի շահագործման ավարտից հետո կատարվելու է լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա, ինչի համար նախատեսվում է 2977.0 հազ. ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի համար նախատեսվում է մասնահանել 1343.7 հազ. ՀՀ դրամ:

Հանքի տարածքում կանխատեսվող ձայնի սահմանային թույլատրելի մակարդակը կազմում է 70 դԲԱ, ինչը բավարարում է նորմատիվային փաստաթղթերի պահանջներին:

Հայցվող տարածքի կոորդինատներն ըստ ArmWGS-84 համակարգի հետևյալն են.

Բլոկ 1 - C_1				Բլոկ 2 - C_1		
	X	Y			X	Y
1	4423260.0000	8457535.0000		1	4422714.0000	8457619.0000
2	4423109.5850	8457629.9047		2	4422765.0000	8457726.0000
3	4423017.0000	8457681.0000		3	4422605.4978	8457754.8774
4	4422930.0000	8457695.0000		4	4422487.0000	8457844.0000
5	4422792.0000	8457722.0000		5	4422374.0000	8457987.0000
6	4422738.3402	8457610.5528		6	4422264.0000	8458128.0000
7	4422905.8990	8457554.0416		7	4422170.6130	8458270.0203
8	4423030.0470	8457514.3370		8	4422089.0000	8458418.0000
9	4423119.3460	8457518.7590		9	4422066.2993	8458399.5894
10	4423190.2921	8457514.3180		10	4422123.7064	8458235.8740
				11	4422196.3607	8458060.3607
				12	4422278.9393	8457995.4445
				13	4422324.1329	8457939.7381
				14	4422439.4494	8457794.3431
				15	4422563.2564	8457669.6018
Բլոկ 3 - C_1				Բլոկ 4 - C_1		
	X	Y			X	Y
1	4423287.0000	8457551.0000		1	4422359.2300	8458045.8836

2	4423395.0000	8457660.0000		2	4422452.0000	8458167.0000
3	4423498.8617	8457783.3616		3	4422556.6733	8458302.2031
4	4423364.3233	8457890.3685		4	4422453.6713	8458393.8605
5	4423230.7325	8457954.4007		5	4422308.2555	8458446.9634
6	4423142.3194	8457994.2224		6	4422158.3078	8458501.7212
7	4422979.6407	8458061.2498		7	4422100.7340	8458438.9103
8	4422868.1004	8458107.1873		8	4422193.0833	8458279.5918
9	4422799.6636	8458157.8136		9	4422288.6614	8458136.5484
10	4422732.7256	8458201.3054				
11	4422672.8603	8458240.6181			Բլոկ 5 - C_1	
12	4422602.0074	8458282.4210			X	Y
13	4422493.0000	8458151.0000		1	4421626.8925	8458820.4008
14	4422380.9035	8458019.3138		2	4421636.0000	8458900.0000
15	4422477.2288	8457898.9844		3	4421562.0000	8459061.0000
16	4422572.6796	8457804.8795		4	4421478.8555	8459218.2334
17	4422724.7104	8457756.5611		5	4421331.7104	8459333.8222
18	4422882.4548	8457733.0701		6	4421303.0000	8459198.0000
19	4423024.6720	8457709.7567		7	4421170.6546	8459117.3088
20	4423116.4095	8457659.2476		8	4421160.5647	8459007.3825
21	4423203.7652	8457603.0553		9	4421286.5114	8458927.1151
				10	4421470.2400	8458885.0135
				11	4421520.9572	8458869.3689

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, պատմության, բնության հուշարձաններ առկա չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվել են փոշենստեցման, թափոնների և կենցաղային աղբի տեղափոխման, կենսաբազմազանության պահպանման վերաբերյալ բնապահպանական միջոցառումներ:

Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունը նախատեսել է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, ինչի համար նախատեսված է որոշակի գումար:

Պատճառաբանական մաս. Արտաշատի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, կադաստրի, ջրային կոմիտեները, Արարատի մարզպետարանը, Արտաշատի համայնքապետարանը: ՇՄԱԳ

հաշվետվությունը բազմաթիվ առաջարկություններով, դիտողություններով, ուղարկվել է «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ին լրամշակման, սակայն ընկերության կողմից լրամշակումն իրականացվել է թերի: Մասնավորապես լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությունում առկա են եղել անհամապատասխանություններ, այդ թվում՝

1. Պաշտպանության նախարարության, ինչպես նաև կադաստրի կոմիտեից ստացված կարծիքների համաձայն՝ հայցվող տարածքում առկա են ջրային նպատակային նշանակության հողեր, իսկ ՇՄԱԳ հաշվետվությունում հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով:

2. ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում Արաքս գետից գետավազի արդյունահանման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման 6-րդ կետի պահանջների համաձայն՝ Արաքս գետում գտնվող ողողատային տիպի հանքավայրերից գետավազի արդյունահանումը թույլատրվում է գետի ողողատների 2-րդ դարավանդից և հանքավայրի արտադրողականությունը չի կարող գերազանցել տվյալ տարվա ընթացքում ջրի հոսքով կուտակված չափաքանակը: Նշվածն ապահովելու համար նախագծում և ՇՄԱԳ-ում չեն ներկայացվել համապատասխան հիմնավորումներ՝ Արաքս գետի հիդրոլոգիական բնութագրերով պայմանավորված:

3. Հաշվետվությունում մակաբացման ապարները ներկայացված են որպես հաշվեկշռային պաշարներ, իսկ «Թափոնների մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ մակաբացման ապարները ոչ հաշվեկշռային պաշարներին դասվող օգտակար հանածոներ են, որոնք ենթակա են հատուկ հատկացված տեղեր փոխադրման:

4. Հաշվետվության փաթեթում ներկայացված է հակասական տեղեկատվություն հայցվող տարածքից գետի հեռավորության վերաբերյալ: Հաշվետվությունում նշված է, որ հանքավայրը գտնվում է գետից 26-170 մ հեռավորության վրա, իսկ համաձայն նախագծային փաստաթղթի և թափոնների կառավարման պլանի՝ հանքավայրը գտնվում է Արաքս գետի ողողահունում, տարածքը կապված է ոչ թե ողողատային, այլ «Վերհունային դարավանդի» առաջացումների հետ, ինչը կարող է հանդիսանալ խոչընդոտ շահագործվող տեղամասերի պաշարների վերականգնման համար՝ վերականգնման 1 գործակցով (մասնավորապես՝ «Բլոկ 3-C_1», «Բլոկ 4-C_1» բլոկների համար):

5. ՇՄԱԳ հաշվետվությունում նշված է, որ կառուցվելու են ափապաշտպան կառույցներ, սակայն նախագծային փաստաթղթում, հաշվետվությունում, գծագրական նյութերում դրանց նախագծային լուծումները բացակայում են: Ափապաշտպանի կառուցումը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Հանքային իրավունք ունեցող կազմակերպությունների միջոցներով Արաքս գետի քայքայված ինժեներական կառուցվածքների վերականգնման առաջնահերթությամբ պայմանավորված՝ գետավազի արդյունահանման հետ կապված խնդիրները կանոնակարգելու մասին» որոշման 1-ին մասի պահանջ է:

6. Չի ներկայացվել տեղեկատվություն գործունեության կամ հարակից տարածքներում ջրանցքի առկայության (համաձայն տեզազննման արդյունքների և ներկայացված իրավիճակային հատակագծի), հայցվող տարածքից վերջինիս գտնվելու հեռավորության, պահանջվող անօտարելի գոտու, արդյունահանման աշխատանքների ընթացքում ջրանցքի վրա հնարավոր ազդեցությունների և մեղմացնող միջոցառումների վերաբերյալ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

7. Փորձաքննական գործընթացում «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից իրականացվել են տեղազննման աշխատանքներ ՇՄԱԳ հաշվետվությունում առկա տեղեկատվության և փաստացի իրավիճակի հետ համապատասխանությունը պարզելու նպատակով: Տեղազննման արդյունքում պարզվել և դիտարկվել է, որ Արաքս գետից նվազագույն հեռավորությունը կազմել է 20 մ, տեղ-տեղ գետի հունը գտնվում է 5-8 մետր խորության վրա, գետի երկայնքով առկա են ծառեր և թփեր (համաձայն Ընկերության հիմնավորման՝ պաշտպանիչ բնամասի տեսքով), ինչի պարագայում գետի ջրով ողողումը և պաշարների վերականգնումը ոչ իրատեսական է: Հակառակ դեպքում արդյունահանման արդյունքում բացահանքերից առաջացող փոսերի վերաբերյալ հաշվետվությունում բացակայել է տեղեկատվությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ հիմնավորումները և առաջնորդվելով ՀՀ Ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում Արաքս գետից գետավազի արդյունահանման կարգը հաստատելու մասին» N 18-Ն և 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» 64-Ն որոշումների պահանջներով, Արտաշատի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում նախատեսվող գործունեության իրականացումը կառաջացնի ջրային ռեսուրսի, գետային էկոհամակարգի և բնական լանդշաֆտի հավասարակշռության խախտում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոնշյալ հիմնավորումներից՝ «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արարատի մարզի Արտաշատի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան